600.0414.07.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2018 թվականի №414Ա
քաղ. Երևան

«ԱՐՄԱՎԻԱ»-ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №ԳՌՑ-0187 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №741Ա ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի №4Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ԱՐՄԱՎԻԱ»-ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի նոյեմբերի 3-ին «ԱՐՄԱՎԻԱ»-ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է №ԳՌՑ-0187 թույլտվությունը, որը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 դեկտեմբերի 29-ի №741Ա որոշմամբ երկարաձգվել և շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0507 թույլտվություն),

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 14-ի №4Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 62 390 (վաթսուներկու հազար երեք հարյուր իննսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի №ԵՄԴ/0079/04/14 վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, և նույն դատարանի 2015 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ,

ե) Ընկերության սնանկության գործով կառավարիչը 2018 թվականի հոկտեմբերի 24-ի գրությամբ (Հանձնաժողովում մուտքագրվել է հոկտեմբերի 26-ին) դիմել է Հանձնաժողով Ընկերությանը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

զ) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի հոկտեմբերի 26-ի դրությամբ կազմում է 118 126 (հարյուր տասնութ հազար հարյուր քսանվեց) դրամ,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝

   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի նոյեմբերի 3-ին Ընկերությանը տրամադրված շարժական ռադիոկապի ցանցի շահագործման №ԳՌՑ-0187 թույլտվությունը,

   2) Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 29-ի «ԱՐՄԱՎԻԱ»-ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №ԳՌՑ-0187 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №741Ա որոշումը,

   3) Հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 14-ի «ԱՐՄԱՎԻԱ»-ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցումը պարտավորեցնելու մասին» №4Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2018 թվականի հոկտեմբերի 26-ը հաշվարկված 118 126 (հարյուր տասնութ հազար հարյուր քսանվեց) դրամ պարտքը:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
7 նոյեմբերի 2018թ.